



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ**

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12

Հեռ. (+ 374 10) 34 04 44

(+ 374 10) 34 51 10

Ֆաքս (+ 374 10) 34 94 17

Էլ.փոստ/ E-mail [ph@ph.am](mailto:ph@ph.am)

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_

**«ՀՀ ԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ**  
**ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»**  
**ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ**

Փետրվարի 4-ը քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն է, որի հիմնական նպատակն է հասարակության ուշադրությունը հրավիրել քաղցկեղային հիվանդությունների խնդրի վրա և ևս մեկ անգամ հիշեցնել դրանց վտանգավորության և հնարավորինս վաղ ախտորոշման և կանխարգելման անհրաժեշտության մասին::

Ազգաբնակչության շրջանում հիանդության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով՝ կից Ձեզ է տրամադրվում մամուլի հաղորդագրություն, որն անհրաժեշտ է տարածել Ձեր մարզի զանգվածային լրատվական միջոցների օգնությամբ (ռադիո և հեռուստահաղորդում, տպագիր մամուլ, կայքում տեղադրում և այլն):

Կատարված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ է գրավոր տեղեկատվություն ներկայացնել մինչև ս.թ. փետրվարի 10-ը:

ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՆՅԱՆ

#### Փետրվարի 4-ը քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն է

Ողջ աշխարհում բնակչության հիվանդացության և մահացության կառուցվածքում հիմնական տեղը զբաղեցնում են ոչ վարակիչ հիվանդությունները (ՈՎՀ): Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ աշխարհում տարեկան արձանագրվող 57 մլն. մահվան դեպքից 36 մլն արձանագրվում է ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով, ինչը կազմում է մահվան բոլոր դեպքերի գրեթե 2/3-ը: Վերջին երեք տասնամյակների ընթացքում քրոնիկ ոչ վարակիչ հիվանդությունները մեծ վնաս են հասցրել համաշխարհային տնտեսությանը: Այդ հիվանդությունները մեծ բեռ են բոլոր երկրների, հատկապես՝ ցածր եկամուտ ունեցող պետությունների համար: Մահվան պատճառ հանդիսացող հիմնական հիվանդություններ են սրտանոթային հիվանդությունները, չարորակ նորագոյացությունները, շաքարային դիաբետը և թոքերի քրոնիկ հիվանդությունները: Հայաստանի Հանրապետությունում գրանցվող մահերի 85%-ի պատճառը ոչ վարակիչ հիվանդություններն են, որտեղ 19.9% բաժին է ընկնում քաղցկեղից մահվան դեպքերին: Առավել հաճախ հանդիպում է թոքի, ստամոքսի, լյարդի, հաստ աղու և կրծքագեղձի քաղցկեղը:

Քաղցկեղի դեմ պայքարի խնդիրները շատ են: Յուրաքանչյուր տարի փետրվարի 4-ը Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից նշվում է որպես Քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օր: Օրվա հիմնական նպատակն է հասարակության ուշադրությունը հրավիրել քաղցկեղային հիվանդությունների խնդրի վրա և ևս մեկ անգամ հիշեցնել դրանց վտանգավորության եւ հնարավորինս վաղ ախտորոշման և կանխարգելման անհրաժեշտության մասին: Մարդկությունը կարող է նվազեցնել քաղցկեղի և այլ ոչ վարակիչ հիվանդությունների պատճառով մահվան դեպքերի թիվը միայն այն դեպքում, եթե դրա համար ջանքեր գործադրի յուրաքանչյուր անհատ, կազմակերպություն և պետություն: Քաղցկեղի դեմ պայքարի

առանցքային միջոցառումներն են՝ կանխարգելումը, բուժման և քաղցկեղով հիվանդների կյանքի որակի բարելավումը, ինչպես նաև հիվանդության վաղ հայտնաբերման նպատակով իրականացվող սկրինինգային ծրագրերը և պատվաստումները, եթե տվյալ հիվանդության դեմ կա պատվաստանյութ:

Ի՞նչ է առաջացնում քաղցկեղ: Համաձայն ԱՀԿ-ի տվյալների՝ քաղցկեղի դեպքերի 30%-ը պայմանավորված է վարքագծային ռիսկի գործոններով՝ ծխախոտի օգտագործում, ալկոհոլի չարաշահում, անառողջ սնուցում, ցածր ֆիզիկական ակտիվություն: Բացի այդ, քաղցկեղի պատճառ կարող են հանդիսանալ վիրուսային Բ և Ց հեպատիտներն ու մարդու պապիլոմա վիրուսի որոշ տեսակներ: Քաղցկեղից մահվան դեպքերը կարելի է նվազեցնել՝ ազդելով նշված ռիսկի գործոնների վրա: ԱՀԿ-ն և Քաղցկեղի ուսումնասիրության միջազգային գործակալությունը կոչ են անում նաև իրականացնել հետազոտական (սկրինինգային) ծրագրեր և պատվաստումներ՝ պապիլոմա վիրուսի դեմ:

Հայաստանի Հանրապետությունում կանանց քաղցկեղային հիվանդությունների կառուցվածքում արգանդի վզիկի քաղցկեղը երկրորդ տեղում է՝ կրծքագեղձի քաղցկեղից հետո: Այս ախտորոշմամբ ամբողջ աշխարհում տարեկան հիվանդանում է մոտ 500 հազար կին: Մարդու մարդու պապիլոմավիրուսային վարակի (ՄՊՎ) դեմ պատվաստումները կարող են կանխել ՄՊՎ 16 և 18 տեսակներով վարակումը, որոնք ամբողջ աշխարհում արգանդի վզիկի քաղցկեղի դեպքերի 70%-ի պատճառն են: Ելնելով խնդրի գերակայությունից՝ ՀՀ պատվաստումների ազգային օրացույցում նախատեսված է մինչև 2018 թվականը ներդնել մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումներ: